ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.5/31484-2025**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին, «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի (Կ-1101-06.06.2025-ՄԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

**Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝**

1. 20-րդ հոդված՝

1) «հոդվածի» բառը փոխարինել «հոդվածում՝» բառով,

2) առաջարկում ենք հոդվածը բաժանել երկու կետերի՝ լրացնել երկրորդ կետի վերնագիր՝ հետևյալ բովանդակությամբ.

«2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս՝»:

2. 33-րդ հոդված՝

1) 3-րդ կետում «երկրորդ պարբերությունից» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «2-րդ մասից» բառերը,

2) 5-րդ կետով՝ Օրենսգրքի 111-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.5-րդ մասով հղումը առաջարկում ենք շտկել՝ «47» թիվը փոխարինել «28» թվով:

3. 57-րդ հոդվածի 7-րդ կետում առաջարկում ենք շտկել համարակալման հետ կապված վրիպակը՝

1) 6-րդ կետում «նոր 13-րդ» բառերից հետո ավելացնել «և 14-րդ մասեր» բառերը,

2) 7-րդ կետը՝ «7) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15-րդ մաս՝» բառերը հանել, վերջին պարբերությունը համարակալել որպես 14-րդ մաս:

4. 65-րդ հոդված՝

1) 2-րդ մասում առաջարկում ենք «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը,

2) 3-րդ մասում «ենթաօրենսդրական» բառերից հետո լրացնել «նորմատիվ իրավական» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

**Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին օրենքի նախագիծ**

1. Օրենքի նախագծի գլուխները համարակալել արաբական թվանշաններով, ինչպես նաև համարակալումից հետո նշված կետերը հանել հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջը:

2. Օրենքի նախագծի ամբողջ տեքստում ցանկացած հոլովաձևով նշված «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը առաջարկում ենք փոխարինել «Կառավարություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը,

3. 6-րդ գլխի վերնագրում առաջարկում ենք «ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բառերը փոխարինել «ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջները,

4. 31-րդ հոդված՝

1) 2-րդ մասում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը,

2) 3-րդ մասում՝ «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ իրավական» բառերը, իսկ «, որոնցից» բառի փոխարեն առաջարկում ենք լրացնել «: Սույն մասով նշված ակտերից» բառերը:

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

1. 3-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը առաջարկում ենք փոխարինել «Կառավարություն» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:

**«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքների նախագծերի**

1. նախագծի 1-ին հոդվածով՝ գործող օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր 7-րդ կետում «օրենքով» բառին նախորդող «Հայաստանի Հանրապետության» բառերը առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հարգանքով՝

**/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**